Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 6-ի N 362- Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 18 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Գյումրի համայնքում ժամանակավոր տնակների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում՝ գոյություն ունեցող կիսակառույց շենքում տասնութ բնակարանի վերակառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ 164,019,000 դրամ, Գյումրու քաղաքապետարան՝ 19,493,000 դրամ:
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Մովսես Խորենացի 46/1, քաղաքաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	183,512,000 դրամ, հարկային արտոնություն է ակնկալվում 164,019,000 դրամից:
7.	Բարեգործություն ստացողը	Գյումրու ժամանակավոր տնակներում ապրող ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվելու է Գյումրու քաղաքապետարանի տրամադրած ցուցակների հիման վրա՝ Գյումրու քաղաքապետարանի և «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ ստեղծված հանձնախմբի ուսումնասիրությունների արդյունքում: Բնակարանները շահառուներին հանձնվում են բնակության իրավունքով:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թվականի հունիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով՝ վերակառուցման-շինարարական աշխատանքներ, 01.06.2019 թ. - 30.12.2019 թ.՝ 67,900,000 դրամ: Շինարարական նյութերի ձեռքբերում՝ 01.06.2019 թ. - 30.12.2019 թ.՝ 115,612,000 դրամ:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	- Գոյություն ունեցող կիսակառույցի (առկա են 1-ին և 2-րդ հարկի պատերը և 1-ին հարկի ծածկը) վրա ավելացվելու է 3-րդ հարկ: - Շինարարական աշխատանքների իրականացում՝ 183,512,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնա-կառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարան, որն այս նպա-տակով տրամադրել է սեփականության իրավունքով համայնքին պատկանող կիսակառույց շենք, ինչպես նաև իրականացնելու է նախագծանախահաշվային ու փորձաքննության աշխատանքները, արտաքին կոմունիկացիաները և տարածքի բարեկարգումը:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ